

Արցախ - Միշտ Տազնապի Կացութիւն

Արցախի մէջ տազնապի կացութիւնը կը շարունակուի եւ ամէնօրեայ դէպքերը անպակաս են: Այս իրադրութիւնը մասնաւորապէս աւելի կը սրի Մարզին գոյավիճակին մասին Մոսկուայի բրոնաձ անորոշ - չըսելու հա-

մար ժխտական - դիրքին պատճառով:

Միւս կողմէ, Ատրպէյճանէն եւ Վրաստանէն ամէն օր Հայաստան կը հասնին զընացքներ, սակայն վառելանիւթի անբաւարարութիւնը միշտ զգալի է: Եթէ Անդր-

կովկասեան երկաթուղիին աշխատանքը «փոքր-ինչ կարգաւորուել» է, ինչպէս կ'ըսէ «Արմէնփրէս», սակայն վակոններուն մէջ բնակելի տնակները «այնտեսակ վիճակում են, որ վերականգման ենթակայ չեն»: Ազերիներու կողմէ կողոպուտը կը շարունակուի: Հոկտեմբեր 10-15ի միջեւ 23,000 ուրբլիի ապրանք գողցուած է:

Արցախի մէջ բնակչութիւնը միշտ անապահով կացութեան մէջ կը գտնուի եւ ազերիներու կողմէ յարձակումները եւ յարձակումի փոր-

(Շար.ը տեսնել 5րդ էջ)

ԱՐՅԱԽ

(Շար. առաջին էջէն)

ձերը առօրեայ երեւոյթներ են: Մարզը միշտ պաշարուած կը մնայ եւ ազերիներ կը մերժեն հայթայթել անհրաժեշտ պարէնը եւ վառելանիւթը: Ազերիներ պայթուցիկով քանդած էին Ստեփանակերտը տանող կամուրջը: Հոկտեմբեր 25ին Մարտակերտ - Ստեփանակերտ ճանապարհին Ղուրարթլու գետակի կամուրջը պայթեցնելու փորձ մըն ալ կատարած են: Բարեբախտաբար, հակառակ վնասին, ինքնաշարժերու համար կամուրջը պիտանի վիճակի մէջ կը գտնուի:

Արցախ Անընդունելի

Կը նկատէ Թարագելիչի

Նախագիծը

Խորհրդային Միացեալ Ազգութիւններու Քաղաքակառուցութեան եւ Յարաբերութիւններու Յանձնախումբի պետ Կէորկի Թարագելիչ, որուն մէջ յայտարարութիւնը հրատարակած էինք մեր նախորդ թիւով, Արցախի հարցին որպէս լուծում առաջարկած է նախագիծ մը, զոր, ընդունուելու պարագային, առնուազն քայլ մը ետ երթալ պիտի նշանակէր:

Թարագելիչի Յանձնախումբը առաջարկած է ջնջել

Յատուկ Կառավարման Կոմիտէն եւ փոխարէնը ստեղծել ժամանակաւոր Արտակարգ Յանձնաժողով մը, որուն պիտի մասնակցի Ատրպէյճանի ներկայացուցիչը:

Այս մասին արտայայտուելով, Խ. Միութեան ժողովրդական երեսփոխան եւ կուսակցութեան Մարդակերտի Շրջկոմի Ա. Քարտուղար Վահան Գաբրիէլեան «Արմէնփրէս»ին, յայտարարած է, որ նման լուծում մը անընդունելի է, եթէ նոյնիսկ Արցախի մէջ վերականգնի կուսակցութեան Մարզկոմը եւ Մարզային Խորհուրդը: Գերագոյն Խորհուրդի Նախագահութեան նիստին, Գաբրիէլեան յայտարարած է, Արցախի հարցը չլուծուիր, մինչեւ որ Մարզը դուրս չելլէ Ատրպէյճանի կազմէն եւ ուղղակի ենթակայ ըլլայ Կեդրոնական Կառավարութեան, նկատի առնելով որ այժմ անհնարին կը թուի ըլլալ Արցախի Հայաստանին միացումը:

Միւս կողմէ Գաբրիէլեան հերքած է այն լուրը, թէ Մոսկուա որոշումի նախագիծ մը ներկայացուցած է Պաքուի եւ Ստեփանակերտի առ ի քննութիւն: Այդ լուրը «բացարձակապէս ճշ-

մարտութեան չի համապատասխաներ» ըսած է երեսփոխանը:

Արցախ կը գտնուի ողբալի վիճակի մէջ: Վառելանիւթ գրեթէ չկայ, հումքի մատակարարման խափանումները արգելք կ'ըլլան արտադրութեան: Հոկտեմբեր 26ին Ստեփանակերտ ստացած է միայն երկու սիթեռն պէնզին եւ գրեթէ նոյնքան՝ մագուիթ:

Գիւղական շրջանները անասնապահական շէնքերը կարելի չէ եղած նորոգել, շինանիւթերու պակասին հետեւանքով: Կը պակսի նաեւ կերը: Այս տարի ձմեռը կրկնապէս խիստ պիտի ըլլայ արցախցիին համար:

Եղուարդ Վարդանեան, որ Յատուկ Կառավարման Կոմիտէի կուսակցական մարմնին անդամ է, շնորհակալութիւն յայտնած է Հայաստանի բարեգործական եւ միւս հասարակական կազմակերպութիւններուն եւ Հայաստանի ժողովուրդին, որոնք կամաւոր նուիրատուութիւններով Արցախին օգնութիւն ցոյց տուած են: Հակառակ Մարզին օրհասական վիճակին, Վարդանեան յայտարարած է, որ առաջին հերթին իրենց հարկաւոր է քաղաքական եւ բարոյական աջակցութիւնը,